ԿԱՐԾԻՔ

Դավիթ Էդիկի Հակոբյանի «Չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի հիմնախնդիրների սահմանադրաիրավական հետազոտությունը (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինակով)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է արդիական և քաղաքականապես զգայուն գիտական խնդրին՝ չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի հիմնախնդիրների սահմանադրաիրավական ուսումնասիրությանը: Աշխատանքը կարևոր է ոչ միայն տեսական իրավագիտության, այլև գործնական միջազգային և պետականաշինական գործընթացների տեսանկյունից: Ատենախոսությունում հայցորդը հիմնավոր կերպով առանձնացրել է չճանաչված պետությունների խնդիրների շրջանակը, ներկայացրել դրանց սահմանադրաիրավական առանձնահատկությունները և իրականացրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետության կազմավորման, կայացման և իրավակարգի համեմատական վերլուծություն:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլուխներից, որոնք ներառում են թվով տասնմեկ պարագրաֆներ: Ատենախոսության կառուցվածքը հստակ է, տրամաբանական և համապատասխանում է գիտական աշխատանքի պահանջներին: Նյութը դասավորված է համակարգային սկզբունքով՝ նախ՝ տեսական և մեթոդաբանական հիմքերի բացահայտում, ապա՝ կոնկրետ իրավական վերլուծություններ և եզրակացություններ: Աշխատանքի բաժինների հաջորդականությունը ապահովում է մտքի զարգացումը և ընթերցողի կողմնորոշումը հետազոտության տրամաբանության ծիրում:

Ատենախոսության առաջին գլխում հեղինակն անդրադարձել է չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի ընդհանուր օրինաչափություններին ու առանձնահատկություններին: Առանձին ենթագլխի տեսքով անդրադարձել է չճանաչված պետությունների որպես ժամանակակից միջազգային հարաբերությունների գործոն հանդիսանալու խնդրին:

Ատենախոսության երեկրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավիճակին, որում

հեղինակը հինգ պարագրաֆներում ներկայացրել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ որպես սահմանադրական իրավունքի և սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավիճակի հասկացության, էության և կառուցվածքի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խնդիրների, նպատակների, ֆունկցիաների և դրանց սահմանադրական ամրագրման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքների իրագործմանն ուղղված պետության սահմանադրական լիազորությունների, քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լիազորությունների ու խնդիրների վերաբերյալ բավարար չափի խորություն և տրամաբանական կառուցվածք ունեցող համակողմանիորեն մշակված աշխատություն: Դրվատանքի է արժանի նաև Հեղինակի կողմից աշխատանքի հավելումը վերաբերելի գիտագործնական նյութերով, ինչն, անշուշտ, լրացնում է աշխատանքի ակադեմիական արժեքը: Բացի այդ, պետք է փաստել նաև, որ աշխատանքը գրված է գիտական ընդունելի լեզվաոճով, հստակ և մտքերի համարժեք տեղայնացմամբ:

Ատենախոսության երրորդ գլուխում հեղինակը ներկայացրել է Անդրկովկասի չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի և ճանաչման հեռանկարների վերաբերյալ իր գիտական դատողությունները՝ իրավական, պատմական, տեսական և պրակտիկ բնույթի վերլուծության ենթարկելով Անդրկովկասի չճանաչված պետությունների կազմավորման առանձնահատկությունները, ճանաչման հեռանկարները և Անդրկովկասյան հակամարտություններն ու Ղարաբաղյան պետության ֆունկցիաների իրականացումը՝ բռնի տեղահանման համատեքստում:

Կարող ենք ասել, որ ատենախոսը կատարել է խորքային տեսական և պրակտիկ վերլուծություն՝ հիմնվելով ժամանակակից սահմանադրականության և սահմանադրական իրավունքի սկզբունքների վրա, հատուկ ուշադրության արժանացնելով սահմանադրաիրավական, միջազգային-իրավական, իրավաքաղաքական և պատմաիրավական բաղադրիչներին առնչվող հիմնախնդիրները:

Ատենախոսության դրական հատկանիշներից են՝

1) Հստակ է ձևակերպված հետազոտության նպատակը, առաջադրանքները և գիտական նորույթը,

2) Աշխատանքը տարբերվում է իր կառուցվածքային ամբողջականությամբ և մեթոդաբանական հիմնավորվածությամբ,

3) Հեղինակը համեմատական դիտանկյունից վերլուծել է մի շարք չճանաչված կամ մասնակիորեն ճանաչված պետությունների (մասնավորապես՝ Աբխազիա, Հարավային Օսիա և Արցախ) իրավական կարգավիճակը, անդարադարձել այդ պետությունների առաջացման և կազմավորման ակունքներին, այդ հարցերը դիտարկելով իրավական լույսի ներքո:

4) Գիտական արժեք է ներկայացնում նաև այն եզրահանգումը, որ չճանաչված պետությունները, չնայած միջազգային իրավունքի կողմից չճանաչվելուն, իրականացնում են պետական ինքնակազմակերպման և ինքնիշխանության իրական դրսևորումներ՝ այդ թվում սահմանադրության ընդունման և քաղաքացիության հաստատման միջոցով:

Չնայած այս ամենին՝ կարծում ենք՝ աշխատանքը զերծ չէ նաև որոշ՝ ոչ էական թերություններից, որոնց կապակցությամբ առկա նկատառումները հանգում են հետևյալին.

1. Աշխատանքն էականորեն կշահեր, եթե Հեղինակը հավելյալ անդադարձ կատարեր Արցախի Հանրապետությունում հանրային իշխանության մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի հետագա իրավական կարգավիճակի հիմնախնդիրներին: Ասվածը կարևորվում է ի թիվս այլնի, նաև այն իրողության հաշվառմամբ, որ նշված ակտերն իրավահարաբերության համապատասխան սուբյեկտների համար արդեն իսկ առաջացրել են իրավական հետևանքներ և, դրանով պայմանավորված, առկա է անհրաժեշտություն դրանց՝ օտարերկրյա պետություններում հետագա կիրառելիության հարցերի առնչությամբ:

2. Պաշտպանության ներկայացվող 5-րդ դրույթի համատեքստում արված եզրահանգումներն առավել համապարփակ բնույթ կկրեին, եթե Հեղինակը

հավելյալ հիմնավորեր պետական և հասարակական կյանքին վերաբերող հարցերի համաժողովրական քննարկման ինստիտուտի առարկայական փոխկապակցվածությունը հատկապես չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի հիմնախնդիրների հետ այն լույսի ներքո, թե համաժողովրդական քննարկման ինստիտուտը նույնչափ արդյունավետ չի՞ լինի արդյոք նաև ճանաչված պետությունների սահմանադրաիրավական ինստիտուտների համակարգում ներառելու իմաստով:

Եզրակացություն: Այսպիսով, ատենախոսը կատարել է չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի հիմնախնդիրների սահմանադրաիրավական հետազոտությանը նվիրված արժեքավոր ու համապարփակ գիտական աշխատություն: Աշխատանքի գիտական արժեքը, կարծում ենք, թույլ է տալիս Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին՝ Դավիթ Հակոբյանին շնորհելու հայցվող ԺԲ.00.02 թվանիշով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Տ.Ա.Խաչիկյան

05.11.2025թ.

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Տիգրան Աշոտի Խաչիկիյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար – դեկանի տեղակալ **Ա.Հ. Պետրոսյան**